# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

*ՄԵՐԻ ՆԱՋԱՐՅԱՆ*

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

***Բանալի բառեր*** *– Հայոց ցեղասպանություն, ՀՀ, Սփյուռք, հարաբերություն, ժխտում, Թուրքիա*

Հայոց ցեղասպանության հերքումն այդ իրադարձության վերջին փուլն է[1]: Հարյուր տարի անց, երբ հետադարձ հայացք ենք նետում ցեղասպանության հարցում Թուրքիայի ժխտողական քաղաքականությանը, ակնհայտ է դառնում, որ որևէ էական փոփոխություն դեռևս չկա: Ինչ խոսք, տարիների ընթացքում Թուրքիայի դիրքորոշումն իր իսկ անցյալի հանդեպ և ժխտողականության ռազմավարությունը, ձևաչափը, մտաշահարկումները փոփոխությունների են ենթարկվել, բայց ոչ երբեք՝ բովանդակությունը: Թուրքիան ունեցել է տարբեր նախագահներ, կառավարություններ, բայց միշտ տիրապետող է եղել ժխտողականությունը՝ երբեմն բացեիբաց, երբեմն քողարկված: Սակայն Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ Թուրքիան հասկացավ, որ ցեղասպանության իրողությունը կասկածի տակ դնելը, որքան արդյունավետ լինի, շարունակ շահարկել հնարավոր չէ: Հարկավոր էր նոր մոտեցում և ռազմավարություն մշակել, որն ի զորու կլիներ դիմակայել Հայոց ցեղասպանության եղելության անհերքելի փաստերին:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախաշեմին պաշտոնական Թուրքիան, պահպանելով հանդերձ Հայոց ցեղասպանության ժխտման և ընդհանրապես Հայաստանի հետ հարաբերություններում ապակառուցողական դիրքորոշումը, այնուամենայնիվ որոշակի փոփոխությունների է ենթարկում իր ժխտողական քաղաքականության մարտավարությունը: 2014 թ. ապրիլին Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի և արտաքին գործերի նախարար Ա. Դավութօղլուի առաջ քաշած «համատեղ վշտի»[2] և «արդար

---

[1] Տե՛ս **Գասպարյան Լ.**, Հայոց ցեղասպանության ժխտման փուլերը Թուրքիայում, 09.09.2016 // https://www.repairfuture.net/index.php/hy/armenian-genocide-recognition-and-reparations-standpoint-of-armenia-armenian/the-stages-of-denial-of-the-armenian-genocide-in-turkey-rmenian?fbclid=IwAR1sEnyZyCOrzvERcf5utYXydLP8-vaO-4MWmJ8jROlVlh0sQVTjxKxMUlc:

[2] Տե՛ս **Չաքրյան Հ.**, «Խղճի տեր ոչ մի հայ չի կարող ժխտել թուրքերի կրած տառապանքը» // «Հայոց ցեղասպանությունը, ցեղասպանության թուրքական ժխտողականությունը, կեղծա-

հիշողության»[1] թեզերը դրա վառ օրինակն են: Այն, որ «համատեղ վշտի» գաղափարը ոչ թե արմատական շրջադարձ էր Հայոց ցեղասպանությունից հրաժարվելու հարցում, այլ զուտ ոճի փոփոխություն, վկայում է հենց թեկուզ այն փաստը, որ «Գյոքչեադա» լաստանավում թուրք հասարակական գործիչ Սեդաթ Լաչինների հետ զրույցում Թուրքիայի նախագահ Ա. Գյուլը, անդրադառնալով «համատեղ վշտին», նշում է, որ «գլխավոր խնդիրը» «արտահայտման ոճի փոփոխությունն է», և «իհարկե, կարևոր են, թե ով է արդարը, ով՝ ոչ, սակայն ավելի կարևոր է արտահայտման **ոճի փոխադարձ փոփոխությունն ու փոխըմբռնումը**»[2] (ընդգծումը մերն է – *Մ. Ն.*):

Նշվածի օգտին է վկայում նաև այն փաստը, որ Թուրքիայի արտգործնախարարության պաշտոնական կայքէջի «1915 թվականի իրադարձությունները և պատմության վերաբերյալ թուրք-հայկական հակասությունը» բաժնում Թուրքիան, ի տարբերություն նախորդ տասնամյակների, հիմնովին «չի ժխտում հայերի տառապանքները», ներառյալ «բազում կյանքերի կորուստը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում»՝ դրա հետ միասին շեշտելով, որ «մեծ թվով թուրքեր ևս մահացել են կամ սպանվել» այդ տարիներին: Դրանով հանդերձ՝ «Թուրքիան առարկում է այս ողբերգության միակողմանի ներկայացումը որպես մեկ խմբի կողմից մյուսի նկատմամբ իրագործած ցեղասպանություն»[3]:

Հարկ է նկատել, որ թուրքական ժխտողականության նման նոր դրսևորումը պակաս վտանգավոր չէ, քան պատմական փաստերի կեղծարարությունը, քանի որ դրանով փորձ էր արվում հավասարության նշան դնել դահիճի և զոհի միջև:

Հայոց ցեղասպանության ժխտման հարցում թուրքական իշխանությունների որդեգրած նշված մոտեցումների վառ վկայությունն է նաև այն փաստը, որ դեռևս 2014 թ. օգոստոսին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի՝ Էրդողանին 2015 թ. ապրիլի 24-ին Երևան հրավիրելու և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը միասին հարգելու առաջարկին նա իր պատասխանում այդ նույն օրը՝ ապրիլի 24-ին, ՀՀ նախագահին հրավիրում է Թուրքիա՝ Գալիպոլիի ճակատամարտի 100-ամյակին նվիրված միջոցառումներին ներկա գտնվելու

---

բարությունն ու հայատյացության դրսևորումները», հոդվածների ժողովածու, պրակ Բ, Երևան, 2017, էջ 224:

[1] Տե՛ս **Davutoğlu A.**, Turkish-Armenian Relations: Is a “Just Memory” Possible ? // «Turkish Policy Quarterly», Vol. 13, n° 1, Spring 2014/ Historical Legacies in the Region: “What’s Past is Prologue”?, p. 28-30:

[2] Տե՛ս **Չաքրյան Հ.**, նշվ.աշխ., էջ 224:

[3] The Events of 1915 and the Turkish-Armenian Controversy over History: An Overview // http://www.mfa.gov.tr/the-events-of-1915-and-the-turkish-armenian-controversy-over-history_-an-overview.en.mfa.

առաջարկով՝ այն պատճառաբանությամբ, թե «Գալիպոլիում կռվող հայ զինվորներ էլ կային»[1]:

Կարծում ենք՝ դժվար չէ կռահել, որ ՀՀ նախագահին ուղղված Էրդողանի պատասխան հրավերն ընդամենը նպատակ էր հետապնդում հնարավորինս նվազեցնել Հայոց ցեղասպանության 100-ամյակի նշանակությունը՝ ստորադասելով այն Գալիպոլիի հայտնի ճակատամարտին: Հետևաբար, որքան էլ որ թուրք բարձրաստիճան պաշտոնյաները պարբերաբար կրկնեն, թե Հայաստանը Թուրքիայի պարզած ձեռքն օդում է թողել, հետագա զարգացումներն ապացուցում են, որ իրականում Թուրքիան տրամադրված չէ Հայաստանի կարծիքով կամ արձագանքով ավելի լուրջ բան անել: Հայոց ցեղասպանությանը վերաբերող յուրաքանչյուր քայլ նպատակ ունի միջազգային հանրության «աչքն ու ականջը շոյել»: Էրդողանի՝ 2014 թ. ապրիլի 24-ին հայերի թոռներին ուղղած ցավակցական ուղերձի[2]՝ դիվանագիտական կառույցների միջոցով ինը լեզուներով տարածումը վառ ապացույցն է, որ Թուրքիայի իրական թիրախը ոչ թե հայերն են, այլ միջազգային հանրությունը:

Այդուհանդեձ, Հայոց ցեղասպանության 100-ամյակի հետ կապված իրադարձությունների համատեքստում ցանկանում ենք շեշտել այն փաստը, որ նշված ճանապարհով Հայոց ցեղասպանությունը ժխտելու ու միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելու թուրքական իշխանությունների հետևողական ջանքերն այնուամենայնիվ ի զորու չեղան կասեցնելու Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացքը: Հայոց ցեղասպանության 100-ամյակը նշանավորվում է ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հաղթարշավով: Բազմաթիվ մտավորականներ, պետական, հասարակական, քաղաքական և կրոնական գործիչներ իրենց ձայնը բարձրացրին՝ կոչ անելով մեծ պետություններին անարգանքի սյունին գամել Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին և պայմաններ ստեղծել այդ արհավիրքի հետևանքների վերացման համար: Նման արձագանքը վկայում է, որ հայերի դեմ տեղի ունեցածն ընկալվում էր ոչ թե սոսկ իբրև մի ժողովրդի ցավ, այլ մարդկության դեմ իրականացված ոճիր:

Հայկական դիվանագիտությունը, օգտագործելով պատեհ առիթը, շարունակում է քայլեր ձեռնարկել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, այդ հարցում համաշխարհային հանրության տեղեկացվածության աստիճանի բարձրացման, ինչպես նաև մարդկության դեմ ուղղված նման հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ:

Դրա ամենավառ վկայությունը 2015 թ. մարտի 27-ին Ժնևում՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում, Հայաստանի նախաձեռնությամբ կոնսենսուսով ընդունված ցեղասպանությունների կանխարգելման վերաբերյալ

---

[1] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3 փետրվարի 2015:

[2] Տե՛ս **Գասպարյան Լ.**, նշվ. աշխ.:

բանաձևն է, որի համահեղինակները 71 երկրների ներկայացուցիչներ էին: Բանաձևում ամրագրված են ցեղասպանությունների կանխարգելման նպատակով առաջնային կարևորություն ունեցող քայլերը, որոնք արտացոլված էին նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում ՀՀ նախաձեռնած ցեղասպանության կանխարգելման նախորդ բանաձևերում[1]:

ՀՀ արտգործնախարարությունը զգալի ավանդ է ունեցել նաև 2015 թ. ապրիլի 22-23-ին Երևանում կայացած «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» հասարակական-քաղաքական առաջին գլոբալ համաժողովի կազմակերպման և անցկացման հարցում: Ընդ որում, այստեղ ընդունվում է հռչակագիր, որտեղ շեշտվում էր այն միտքը, որ «ցեղասպանությունը անդառնալի հետևանք ունեցող ծանրագույն հանցագործություն է, և բոլոր պետություններին կոչ էր արվում աջակցել ցեղասպանության կանխարգելման մեխանիզմների ամրապնդմանը»[2]:

Քննարկվող ժամանակաշրջանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման կարևոր հանգրվան կարելի է համարել 2015 թ. հոկտեմբերի 10-ից 11-ը Երևանում կայացած 80 պետություն ներկայացնող Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության եվրոպական երկրների արտգործնախարարների 31-րդ համաժողովը: Այն ընդունում է հինգ բանաձև, որոնցից երեքը նախաձեռնել էր Հայաստանը: Խնդրո առարկա հիմնահարցի տեսանկյունից ցանկանում ենք առանձնացնել «Ցեղասպանության կանխարգելման մասին» բանաձևը, որում հույս էր հայտնվում, որ ցեղասպանությունների կանխարգելման միակ երաշխիքը ցեղասպանությունների ժամանակին ճանաչումն ու դատապարտումն է: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ համաժողովի ընթացքում ՀՀ արտգործնախարար Է. Նալբանդյանը շուրջ 25 հանդիպումներ է ունեցել տարբեր երկրներ ներկայացնող իր գործընկերների հետ[3]:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի հետ կապված հայ-թուրքական հարաբերությունների հարցում ՀՀ ղեկավարության մոտեցումները տեղ են գտել 2015 թ. հունվարի 29-ին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրապարակած «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրում»: Այս փաստաթուղթը բացառիկ էր, քանզի այն կազմվել էր հայ ժողովրդին ներկայացնող բոլոր կառույցների մասնակցությամբ[4]:

---

[1] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3 փետրվարի 2016:

[2] Տե՛ս Հիշում եմ և պահանջում, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից 1915-2015 // «Տեղեկագիրք», թողարկում 3, Երևան, 2015, էջ 5:

[3] Տե՛ս Էդվարդ Նալբանդյանի խոսքը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության Գլխավոր քարտուղար Միկայել Ժանի հետ համատեղ ճեպազրույցին, 12. 10. 2015 // https://www.mfa.am/hy/speeches/2015/10/12/min-jean/5600:

[4] Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի (այսուհետև՝ ՀՑԹԻ) գիտական ֆոնդեր, բաժին 57, թպ. 37, ֆ. հ. 886:

2015 թ. ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում տեղի է ունենում միջոցառում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյակին, որին մասնակցում են Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը, Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսը, Սերբիայի նախագահ Տոմիսլավ Նիկոլիչը[1], ինչպես նաև ավելի քան 60 երկրների և միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան պատվիրակություններ:

Ուստի, կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե նշենք, որ թուրքական կառավարության կողմից ապրիլի 24-ին Գալիպոլիի ճակատամարտի 100-ամյակը տոնելը և այդ առիթով 102 երկրների ղեկավարների Թուրքիա հրավիրելը այդ պետության ղեկավարության և մասնավորապես Էրդողանի ձեռնարկած անբարո միջոցառումներ էին և աշխարհասփյուռ հայության համար այդ սգո օրը ձախողելու անհաջող փորձ:

Ծիծեռնակաբերդում անցկացված ապրիլքսանչորսյան և նախորդ միջոցառումները, անշուշտ, մեծապես նպաստում են Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի նոր թափով ծավալմանը թե՛ ապրիլի 24-ին նախորդած և թե՛ հաջորդած ժամանակաշրջաններում, ընդ որում՝ ինչպես պետությունների, միջազգային կառույցների, այնպես էլ տարբեր երկրների վարչատարածքային միավորների մակարդակով:

Այդ առումով ցանկանում ենք առանձնացնել Հռոմի պապ Ֆրանցիսկոս I-ի՝ ապրիլի 12-ին Սուրբ Պետրոսի տաճարում անցկացրած հատուկ պատարագը, որտեղ նա մոտ մեկմիլիարդանոց կաթոլիկ հանրության առջև հրապարակայնորեն ճանաչում է և գործածում «ցեղասպանություն» եզրույթը, կոչ անելով աշխարհին, առավել ևս՝ Թուրքիային՝ հրաժարվել լռությունից, չեզոքությունից և Հայոց ցեղասպանության ժխտողականությունից, քանզի «չարիքի քողարկումը կամ դրա մերժումը նման է նրան, որ թույլ տանք վերքն առանց վիրակապելու շարունակի արյունահոսել»[2]:

Հռոմի պապի նման դիրքորոշումը, առավել ևս՝ «ցեղասպանություն» եզրույթի օգտագործումը լուրջ դժգոհությունների տեղիք են տալիս պաշտոնական Անկարայում: Ուստի ամենևին պատահական չէր, որ Էրդողանը Հռոմի պապի կողմից Հայոց ցեղասպանությունը XX դարի առաջին ցեղասպանություն համարելը «զառանցանք» է համարել և հորդորել «այլևս չկրկնել այդ

---

[1] Տե՛ս Հայաստանի, Սերբիայի, Կիպրոսի, Ֆրանսիայի և Ռուսաստանի նախագահները ելույթ ունեցան Ծիծեռնակաբերդում, 24.04.2015 // http://www.azatutyun.am/content/article/26976030.html:

[2] Հռոմի պապ Ֆրանցիսկոսի, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի ելույթները՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում մատուցված պատարագի ժամանակ // «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 2015, թիվ 1, էջ 13:

սխալը»[1]: Արդեն ապրիլի 13-ին Անկարան հետ է կանչում Վատիկանում և Իտալիայում հավատարմագրված Թուրքիայի դեսպաններին, իսկ Անկարայում Վատիկանի դեսպանը հրավիրվում է Թուրքիայի Արտաքին գործերի նախարարություն, որտեղ նրան հայտնում են, որ «Հռոմի պապի նման հայտարարությունը վստահության կորստի պատճառ է դարձել Թուրքիայում», և որի համար Վատիկանը պատասխան է տալու[2]:

Կարծում ենք՝ միանգամայն իրավացի է Ա. Մելքոնյանը, որը, մեկնաբանելով վերը նշված իրադարձությունները, նշում է, որ դա «հերթական թուրքական հիստերիան էր», քանի որ Թուրքիան նման կերպ էր վարվում Հայոց ցեղասպանությունը դատապարտած և ցեղասպանությունը քրեականացնող օրինագծեր ընդունած բոլոր երկրների դեսպանների հետ: Սակայն, ըստ նույն Մելքոնյանի՝ տվյալ դեպքում Թուրքիայի դեմ կանգնած էր «մեկ միլիարդ հետևորդներ ունեցող Վատիկանը», ուստի նրա բարձրացրած աղմուկը «որևէ հետևանք ունենալ չէր կարող»[3]:

Պաշտոնական Անկարայի նման վերաբերմունքը Հռոմի պապի նկատմամբ առաջացնում է ամբողջ կաթոլիկ աշխարհի, այդ թվում՝ Եվրոպայի արդարացի վրդովմունքը՝ հանգեցնելով նորանոր երկրների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևերի ընդունմանը:

Այսպես, 2015 թ. ապրիլի 15-ին 28 պետություն ներկայացնող Եվրոպական խորհրդարանը, հարգանքի տուրք մատուցելով Հայոց ցեղասպանության մեկուկես միլիոն հայ նահատակների հիշատակին, միանում է «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի» ոգեկոչմանը և կոչ անում «Եվրոպական հանձնաժողովին ու Եվրոպական խորհրդին միանալ հիշատակի արարողություններին»: Իսկ արդեն 2015 թ. ապրիլի 23-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն ընդունում է «Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի հիշատակման» հայտարարությունը, որով Եվրոպական միության օրենսդիր մարմինը «ցեղասպանությունների կանխարգելումը համարում է միջազգային հանրության առաջնահերթություն» և ուղերձ հղում Թուրքիային՝ «առերեսվել սեփական պատմության հետ, առանց նախապայմանների կարգավորել հարաբերությունները Հայաստանի հետ՝ սահմանները բացելու և դիվանագիտական հարաբերություններ ստեղծելու միջոցով»[4]:

---

[1] Տե՛ս Էրդողանը «զառանցանք» է անվանել Հռոմի պապի խոսքերը Ցեղասպանության մասին, 15. 04. 2015 // http://panarmenian.net/m/arm/news/190692:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **Բարսեղյան Լ.**, Մեծ իրադարձություն՝ Վատիկանում, 14. 04. 2015 // http://armtimes.com/hy/article/62584:

[4] **Զաքարյան Ա.**, Եվրոպական խորհրդարանը միաձայն ընդունեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին» նվիրված բանաձևը, 15. 04. 2015 // http://blognews.am/arm/news/258965/evropakan-khorhrdarany-miadzayn-yndunec-hayoc-cexaspanutyan-100-rd-tarelicin-nvirvats-banadzevy.html:

Դեռևս 2015 թ. մարտի 3-ին Եվրոպական ժողովրդական կուսակցության Քաղաքական համաժողովը հանդես էր եկել «Հայկական ցեղասպանությունը և եվրոպական արժեքները» խորագիրը կրող բանաձևով, որում դատապարտվում էր թե՛ երիտթուրքերի և թե՛ թուրքական հաջորդ վարչակարգերի իրականացրած Հայոց ցեղասպանությունը՝ դրանով իսկ, փաստորեն, ի ցույց դնելով թուրքական իշխանությունների ցեղասպան քաղաքականության ժառանգականությունը: Բացի այդ, նշված բանաձևում թուրքական իշխանությունների կողմից ցեղասպանության ժխտումը համարվում է պատասխանատվությունից խուսափելու և ոճրագործությունները մոռացության մատնելու փորձ: Նշված բանաձևը մյուսներից շահեկանորեն տարբերվում է նրանով, որ դրանում նշվում է նաև նյութական հատուցման, պատմական հողերի վերադարձի և Արևմտյան Հայաստանում գտնվող պատմամշակութային արժեքների վերականգնման անհրաժեշտության մասին[1]:

Նմանատիպ բանաձև ընդունվել է նաև Եվրանեսթ խորհրդարանական վեհաժողովում 2015 թ. մարտի 18-ին: Այստեղ ևս կոչ էր արվում Թուրքիային «ճանաչել ցեղասպանությունը և հաշտվել իր անցյալի հետ»: Բացի այդ, ընդունված բանաձևում շեշտվում էր նաև «ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված անձանց միջազգային իրավունքների և պատմական արդարության վերականգնման գործում միջազգային հանրության ջանքերը»[2]:

Նշված կազմակերպություններից բացի, Հայոց ցեղասպանության 100-ամյակի հետ կապված դրա միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացը պետական մակարդակով արծարծվում է նաև աշխարհի շատ երկրներում: Ընդ որում՝ ոչ միայն առանձին պետություններ են վերահաստատում իրենց դիրքորոշումը ցեղասպանության ճանաչման հարցում, այլև նորանոր երկրներ են միանում այս գործընթացին:

Այսպես, 2015 թ. ապրիլի 14-ին Չեխիայի խորհրդարանի Պատգամավորների պալատի արտաքին հարաբերությունների կոմիտեն ընդունում է բանաձև, որում «ելնելով ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիայից, հաշվի առնելով հասանելի փաստերը Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ», իր «ցավակցությունն ու համերաշխությունն աշխարհի հայությանը» հայտնելով, ոգեկոչում է «նաև հույների, ասորիների և եզդիների կոտորածները»: Բացի այդ, բանաձևում դա-

---

[1] Տե՛ս **Մինասյան Է.**, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման արդի փուլի առանձնահատկությունները. դատապարտում և հատուցում // «Հայոց ցեղասպանություն-100 ճանաչումից՝ հատուցում», Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2016, էջ 39:

[2] Տե՛ս **Մարուքյան Ա.**, Եվրամիության դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում // «ԼՀԳ», 2016, թիվ 1, էջ 19:

տապարտվում էին նմանատիպ գործողությունները, ինչպես նաև «ցեղասպանությունների ծանրության նվազեցումը կամ ժխտումը»[1]:

Ժամանակագրական առումով հաջորդն Ավստրիայի խորհրդարանն էր, որը 2015 թ. ապրիլ 22-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ հանդես է գալիս հայտարարությամբ, որում մասնավորապես նշվում էր, որ Ավստրիան իր պարտքն է համարում «այս սարսափելի իրադարձությունները որպես ցեղասպանություն ճանաչել և դատապարտել»: Բացի այդ, հայտարարությամբ կոչ էր արվում Թուրքիային՝ «անկեղծորեն առերեսվելու իր անցյալի մութ ու ցավալի դրվագի հետ և Օսմանյան կայսրությունում հայերի հանդեպ իրագործված հանցագործությունը որպես ցեղասպանություն ճանաչել»[2]: Այստեղ տեղին է հիշել, որ Առաջին աշխարհամարտում Ավստրո-Հունգարիան դաշնակցում էր Օսմանյան կայսրության հետ և նման հայտարարությամբ Ավստրիան փաստորեն ճանաչում էր իր պատմական պատասխանատվությունն այդ հարցում: Ուստի ամենևին պատահական չէ, որ Է. Նալբանդյանը ողջունել է և բարձր գնահատել այդ ձեռնարկը[3]:

Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության օրենսդրական մարմինը 2015 թ. մայիսի 6-ին ընդունում է «1915 թվականի Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ իրականացված ողբերգական գործողությունները ցեղասպանություն» որակող բանաձև, որտեղ, վկայակոչելով Եվրոպական խորհրդարանի կողմից 2015 թ. ապրիլի 15-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ ընդունված բանաձևը, կոչ է անում Թուրքիայի իշխանություններին առերեսվել անցյալին[4]:

Եվրոպական մեկ այլ երկրի՝ Բելգիայի Ներկայացուցիչների պալատը 2015 թ. հուլիսի 24-ին ձայների մեծամասնությամբ ընդունում է Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև, որտեղ շեշտվում էր Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունը: Բացի այդ, բանաձևում կոչ էր արվում Հայաստանին և Թուրքիային Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ քայլեր ձեռնարկել դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու, ինչպես նաև տնտեսական փոխշահավետ համագործակցության նպատակով սահմանները բացելու ուղղությամբ[5]:

---

[1] Տե՛ս Չեխիայում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բանաձև է ընդունվել, 14. 04. 2015 // https://www.azatutyun.am/a/26955763.html:

[2] Տե՛ս Ավստրիան ճանաչել է Հայոց ցեղասպանությունը. խորհրդարանի խմբակցությունները համատեղ հայտարարություն են ընդունել, 22. 04. 2015 // http://www.panarmenian.net/arm/news/191014/:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Լյուքսեմբուրգի խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, 06. 05. 2015 // https://www.mfa.am/hy/press-releases/2015/05/06/luxembourg-genocide/5189:

[5] Տե՛ս Բելգիայի Ներկայացուցիչների պալատը Ցեղասպանությունը ճանաչող բանաձև է ընդունել, 24. 07. 2015 // http://www.panarmenian.net/arm/news/195193/:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի հետ կապված զգալի հետաքրքրություն է ներկայացնում եվրոպական մեկ այլ պետության՝ Գերմանիայի դիրքորոշումը, որն Առաջին աշխարհամարտի տարիներին փաստորեն Թուրքիայի դաշնակիցն էր: 2015 թ. ապրիլի 23-ին Գերմանիայի նախագահ Յոախիմ Գաուկը Բեռլինի մայր տաճարում Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ ոչ միայն հարգանքի տուրք է մատուցում անմեղ զոհերի հիշատակին, այլև կրկնելով Հռոմի պապի ձևակերպումը՝ Հայոց ցեղասպանությունն անվանում է «20-րդ դարի առաջին ցեղասպանություն» և նշում այդ ոճրագործության մեջ իր երկրի մեղսակցության մասին[1]: Գերմանիայի նախագահի այս ելույթին 2015 թ. ապրիլի 24-ին հաջորդում է Գերմանիայի խորհրդարանի՝ Բունդեսթագի նախագահ պրոֆեսոր Նորբերտ Լամերտինի հայտարարությունը, ըստ որի՝ «անցյալի հետ առերեսումը մեզ համար կարող է ցավոտ լինել, սակայն միևնույն ժամանակ կարող է լինել ազնիվ և ինքնաքննադատական մոտեցում սեփական անցյալի նկատմամբ»: Հանգամանք, որը, ըստ Լամերտինի, «կարևոր է այլ պետությունների հետ հարաբերությունների կառուցման տեսանկյունից, որի համար պետք է խիզախություն՝ փոխըմբռնման և հաշտեցման հասնելու համար»[2]:

Ցանկանում ենք ավելացնել միայն, որ Յ. Գաուկի և Ն. Լամերտինի հայտարարությունները խիստ կարևոր են ոչ միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման տեսանկյունից, այլև արժեքավոր ներդրում են ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման միջազգային հանրության միասնական ջանքերում:

Ուստի ամենևին պատահական չէ, որ արդեն 2016 թ. հունիսի 2-ին Գերմանիայի Բունդեսթագի ընդունած «1915 թվականի հայերի և մյուս քրիստոնյա փոքրամասնությունների ցեղասպանության հիշատակի և ոգեկոչման մասին» բանաձևում Գերմանիայի խորհրդարանը դատապարտում է «օսմանյան կառավարության կողմից հայերին գրեթե ամբողջությամբ ոչնչացնելու գործողությունները և **ընդունում է իր պատմական պատասխանատվությունը ողբերգության համար**» (ընդգծումը մերն է – *Մ. Ն.*)[3]: Ինչպես հստակ երևում է, Գերմանիան, ի տարբերություն 2005 թ. հունիսի 15-ի բանաձևի, որով Բունդեսթագը պարզապես դատապարտում էր «Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի կառավարության արարքները, որոնց հետևանքով բնաջնջվել է Անատոլիայի գրեթե ամբողջ հայությունը»[4], 2016 թ. բանաձևում փաստորեն

---

[1] Տե՛ս Հիշում եմ և պահանջում, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից 1915-2015, էջ 41:

[2] Տե՛ս Գերմանիան ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, 02. 06. 2016 // https://www.civilnet.am/news/2016/06/02/bundestag-genocide-resolution-discussion/294283:

[3] ՀՑԹԻ, գիտական ֆոնդեր, բաժին 41, թպ. 109, ֆ. հ. 264:

[4] Տե՛ս **Նաջարյան Մ., Մուրադյան Հ.**, Գերմանիայի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում (2001-2016 թթ.) // «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, 2020, թիվ 2, էջ 179:

ընդունում է իր՝ իբրև Թուրքիայի դաշնակցի մեղսակցությունը Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության խնդրում:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացը զգալիորեն առաջ է ընթանում նաև Հարավային Ամերիկայի երկրներում:

Այսպես, Բրազիլիայի Դաշնային սենատը 2015 թ. հունիսի 2-ին միաձայն ընդունում է սենատի Արտաքին հարաբերությունների և ազգային պաշտպանության հանձնաժողովի նախագահ, դաշնային սենատորներ Ալոիզիո Նունես Ֆերեյրա Ֆիլյոյի և Ժոզե Սերայի հեղինակած թիվ 550/2015 բանաձևը: Այնտեղ շեշտվում էր, որ «Դաշնային սենատը ճանաչում է հայ ժողովրդի ցեղասպանությունը, որի 100-րդ տարելիցը նշվեց 2015 թ. ապրիլի 24-ին»: Այնուհետև, հարգանքի տուրք մատուցելով ցեղասպանության զոհերի հիշատակին և գնահատանքի խոսքեր հղելով Բրազիլիայում բնակվող հայ փախստականների ժառանգներին երկրի տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում ունեցած զգալի ներդրման համար, ընդգծվում էր, որ «ոչ մի ցեղասպանություն չպետք է մոռացվի, որպեսզի չկրկնվի»[1]:

Ի պատասխան Բրազիլիայի Դաշնային սենատի ընդունած բանաձևի՝ Թուրքիան, հերթական անգամ գործի դնելով իր դիվանագիտական քայլը, հետ է կանչում Բրազիլիայից Թուրքիայի դեսպանին և հրապարակում հայտարարություն, որտեղ, դատապարտելով բանաձևը, այն համարում է «անպատասխանատվության օրինակ» և «պատմական ճշմարտությունը աղավաղող և արհամարհող օրենք»՝ այն հիմնավորմամբ, թե, իբր, «նման բնույթի քաղաքական որոշումները, որոնք ընդունվում են հայկական լոբբիի ազդեցությամբ, չեն կարող փոխել ո՛չ պատմական փաստերը, ո՛չ էլ իրավական նորմերը»[2]:

Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձև ընդունել է Պարագվայի սենատը 2015 թ. հոկտեմբերի 29-ին[3], իսկ դրանից առաջ՝ հուլիսի 31-ին, Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների 23 օրենսդիր մարմիններ միավորող Լատինաամերիկյան խորհրդարանը[4]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ և դրա ընթացքում Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող տարբեր երկրների բանաձևերը նոր փուլ բացեցին Հայկական հարցի, հայ դատի իրավական լուծման ճանապարհին: Այն է՝ կարելի է փաստել, որ անցել ենք այն կարևոր բնագիծը, որից հետո Հայոց ցեղասպանությունը՝

---

[1] Տե՛ս Բրազիլիայի Սենատը միաձայն ընդունել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև, 29.05.2015 // https://armenpress.am/arm/news/807290/brazilian-senate-unanimously-passes-resolution-onarmeniangenocide-recognition.html:

[2] Տե՛ս Թուրքիան Բրազիլիայից հետ է կանչել իր դեսպանին, 09.06.2015 // https://www.civilnet.am/news/2015/06/09/turkey-recalls-ambassador-from-brazil/271801:

[3] Տե՛ս Պարագվայի Սենատը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, 03.11.2015 // http://www.genocide-museum.am/arm/03.11.2015paraguay.php:

[4] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3 փետրվարի 2016:

որպես պատմաքաղաքական երևույթ և հայերի հանդեպ իրականացված մեծագույն ոճիր, այլևս քննարկման ենթակա չէ: Ինքնին դա կարևոր է, քանզի Հայոց ցեղասպանության ճանաչման համար տարբեր երկրներում գտնվող թե՛ մեր համայնքները և թե՛ հայկական շահերը ներկայացնող խմբերը, ինչո՞ւ չէ՝ նաև մեր դիվանագիտությունը տարիներ շարունակ ջանքեր են թափել:

Անշուշտ չի կարելի բացառել նաև այն փաստը, որ պատմական այս փուլում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ գերակայող նեոօսմանիզմի, իսլամական աշխարհի առաջնորդի, տարածաշրջանային գերտերության վերածվելու նկրտումները աշխարհաքաղաքական կարևոր հարցերում առաջացրել են շահերի հակադրություն և մեծացրել Թուրքիայի նկատմամբ անբարյացակամ պետությունների թիվը: Հարկ է նկատի ունենալ, որ դա կարող էր ինչ-որ դեր խաղալ պետությունների հայանպաստ դիրքորոշման վրա: Սակայն, քաջ գիտակցելով այն հանգամանքը, որ քաղաքականության մեջ հնարավոր չէ միանշանակորեն պնդել, թե որն է այս կամ այն երկրի իրական նպատակը այս կամ այն հարցում, այնուամենայնիվ ցանկանում ենք նշել, որ խիստ պարզունակ կլինի, եթե մենք Հայոց ցեղասպանության ճանաչումը ուղղակիորեն կապենք Թուրքիայի հետ հարաբերությունների խոչուխութերի հետ:

Պատմությունը բազմաթիվ օրինակներ է տեսել, երբ տարբեր պետությունների հարաբերությունները տեղիք են տվել «մակընթացությունների» և «տեղատվությունների»: Բայց ամեն դեպքում հարաբերությունների որակի փոփոխությունից (իսկ նախընտրությունների փոփոխությունները բոլոր ժամանակներում բնորոշ է Թուրքիային) արդեն ընդունված բանաձևը չի փոխվում: Եվ որքան էլ պետությունները առաջնորդվում են սեփական շահերով, այնուամենայնիվ, ընդունելով և դատապարտելով ցեղասպանությունը, մեկ անգամ ևս վերահաստատում են իրենց հավատարմությունը մարդու իրավունքների պաշտպանությանը և համամարդկային արժեքներին: Այլ հարց է, որ տարբեր երկրների ընդունած բանաձևերն ու օրինագծերը Հայոց ցեղասպանության վերջնական ճանաչման և նաև դրա հետևանքների վերացման հարցում այդքան որոշիչ չեն: Նախ դրանք աչքի են ընկնում ժամանակագրական, փաստագրական և նաև իրավական զանազանությամբ ու բացթողումներով: Բացի այդ, արդեն բազմիցս համոզվել ենք, որ Հայոց ցեղասպանությունը հիմնականում ճանաչել և դատապարտել են այնպիսի պետությունների օրենսդիր մարմիններ, որոնք լիազորված չեն իրականացնելու գործադիր իշխանությանը բնորոշ գործառույթներ[1]: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ 2015 թ. Հայոց ցեղասպանության 100-ամյակի հռչակագրի ընդունումից հետո հայ իրականության մեջ խնդրո առարկա հիմնահարցը՝ որպես ՀՀ արտաքին

[1] Տե՛ս **Վարդանյան Վ.**, Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները, Երևան, 2017, էջ 19-20:

քաղաքական առաջնահերթություն, առաջ է քաշվում «Ցեղասպանությունը զուտ ճանաչման խնդրից զատ իրավական դաշտ փոխադրելու» տեսլականը, ապա անհրաժեշտ են համակարգված աշխատանք, ճշգրիտ մոտեցում ու որոշակի ձեռնարկումներ: Դրանք պետք է նպաստեն պատրաստելու այն հիմքերը, որոնք արդեն հնարավորություն կտան վեր հանել հատուցման խնդիրը:

Սա բարդ խնդիր է, և պետք է խոստովանել, ժամանակակից իրավական դաշտը նպաստավոր չէ: Քանզի բոլորիս քաջ հայտնի է, որ տարբեր երկրների ներկայացուցիչներից կազմված միջազգային կառույցների ներկայացրած միջազգային իրավունքը կատարյալ չէ, իսկ շատ հաճախ նրանք իրենց նեղ պետական շահերն են հետապնդում: Ի դեպ, Հայաստանի հետ բանակցություններում Թուրքիան իր դիրքորոշումը հենում է քաղաքական, տնտեսական, ռազմական ուժի վրա:

Հետևաբար, միջազգային կառույցների նման առաջարկությունները, անկասկած, խիստ գրավիչ են, սակայն մի բան է դրանց գրավչությունը, մեկ այլ բան դրա իրագործման հնարավորությունը: Այստեղ մեկ անգամ ևս ցանկանում ենք շեշտել, որ նման առաջարկները կյանքի կոչելու համար առաջին կարևոր նախապայմանը այն է, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում հարկ է կարևորել նաև տարբեր երկրների գործադիր իշխանությունների հետ տարվելիք աշխատանքները և քայլեր ձեռնարկել ընդունված բանաձևերը միջազգային ատյաններում օրենքների վերածելու ուղղությամբ:

**Մերի Նաջարյան – *Հայոց ցեղասպանության 100-ամյակը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների համատեքստում***

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը որպես հայ-թուրքական հարաբերությունների վրա ազդող կարևոր գործոն մեծապես պայմանավորված է ժամանակի քաղաքական զարգացումներով, որտեղ յուրաքանչյուր պետություն բնականաբար առաջնորդվում է իր սեփական շահերով: Բայց դրա հետ մեկտեղ՝ անառարկելի է, որ հարաբերությունների որակի փոփոխությունից արդեն ընդունված բանաձևերը չեն փոխվում: Ուստի Թուրքիայի որդեգրած Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ պայքարում 2015 թ. տարբեր պետությունների կողմից բանաձևերի ընդունումը մեծ հաղթանակ և ձեռքբերում է: Ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում Հայոց ցեղասպանության 100-ամյակի բարձր մակարդակով նշելու հանգամանքը և տարբեր երկրների կողմից դրա ճանաչումն ու դատապարտումը վկայում են այն մասին, որ թուրքական իշխանությունների գործողությունները՝ ուղղված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի կասեցմանը, ոչ միայն ցանկալի արդյունք չտվեցին, այլև իրենց ազդեցությունը թողեցին ինչպես Թուրքիայի և նշված երկրների հարաբերությունների, այնպես էլ հայ-թուրքական շփումների վրա, որոնք փաստորեն սառեցված են:

**Мери Наджарян – *100-летие Геноцида армян в контексте армяно-турецких отношений***

***Ключевые слова –*** *Геноцид армян, Республика Армении, диаспора, новый подход, решение, выступление, признание, Турция*

Процесс международного признания Геноцида армян как важного фактора, влияющего на армяно-турецкие отношения, в значительной степени обусловлен политическими реалиями, когда каждое из государств на данный момент времени руководствуется исключительно собственными интересами. Однако необходимо признать, что изменение качества отношений не отразилось на уже принятых резолюциях. Важным достижением в ходе борьбы против проводимой Турцией политики отрицания Геноцида армян было принятие многими государствами в 2015 г. ряда резолюций. Памятные мероприятия в ознаменование 100-летия Геноцида армян, проходившие как в Армении, так и во многих странах мира, признание и осуждение Геноцида свидетельствуют о том, что действия турецких властей, направленные на торможение процесса международного признания Геноцида армян, не только не принесли желаемого результата, но и негативно отразились на отношениях между Турцией и некоторыми государствами, не говоря уже о том, что попытки установления контактов между Арменией и Турцией практически не увенчались успехом.

**Meri Najaryan – *The 100th Anniversary of the Armenian Genocide in the Context of Armenian-Turkish Bilateral Relations***

***Key Words*** *– Armenian Genocide, Republic of Armenia, diaspora, new manifestation, resolution, speech, recognition, Turkey*

As a crucial factor affecting the bilateral relations between Armenia and Turkey, the international recognition of the Armenian genocide is strongly governed by the latest developments in world politics where each country predictably pursues its own interests. It is, however, indisputable that the already adopted resolutions are not changed because of the changes in the quality of relations. For this very reason, in their fight against the denial of the Armenian Genocide espoused by Turkey in 2015, the adoption of pro-Armenian resolutions by different states can be deemed a major victory. The highly eventful commemoration of the centenary of the Armenian Genocide, both in Armenia and around the world, as well as its recognition and condemnation by various countries conclusively proves that the enthusiastic efforts of the Turkish authorities aimed at suspending the process of the international recognition of the Armenian Genocide not only failed to yield the desired results but also heavily impacted the links between those states and Turkey and the Armenian-Turkish relations alike, which currently appear to be suspended.

Ներկայացվել է 11.02.2021
Գրախոսվել է 04.03.2021
Ընդունվել է տպագրության 14.04.2021